CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 583 841
Fax:(37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

23.05.2016թ. N 06.4.11-07/000403-16/ 385 „803"

Ձեր N

ԾՕՀ
օր.N.1

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար
պարոն Գագիկ Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան.

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ կենտրոնական բանկի և վերջինիս դուստր ընկերությունների 2015 թվականի ֆինանսական տարվա գործունեության արդյունքում առաջացած համախմբված շահույթը կազմել է 9,330,662,835 ՀՀ դրամ, որը ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 20.05.2016 թվականի թիվ 1/24 ԾՕՀ-Լ որոշմամբ բաշխվել է (որոշումը կցվում է):

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկում ենք հիմք ընդունելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթները, նախկինում թողարկված 81,275,373,421 ՀՀ դրամ գումարի մուրհակը փոխարինել և ՀՀ կենտրոնական բանկին տրամադրել անտոկոս ցպահանջ գանձապետական հասարակ մուրհակ՝ 73,810,843,153 ՀՀ դրամ գումարի չափով:

Կից՝ 1 թերթ:

Հարգանքով

Արթուր Ջավադյան

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 24880-16
24 05 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«20» մայիսի 2016թ.
Երևան

Թիվ 1/284 Ճծհ-Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թր N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻՑ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 18-րդ հոդվածները

**Ո ր ո շ ու մ եմ**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և վերջինիս դուստր ընկերությունների 2015 թվականի ֆինանսական տարվա գործունեության արդյունքում առաջացած 9,330,662,835 ՀՀ դրամ համախմբված շահույթի 20 տոկոսը՝ 1,866,132,567 ՀՀ դրամ, ուղղել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գլխավոր պահուստի համալրմանը, 80 տոկոսը՝ 7,464,530,268 ՀՀ դրամ, ուղղել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կապիտալում ներդրված անտոկոս ցպահանջ գանձապետական հասարակ մուրհակի մասնակի մարմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
383 Ճծհ
20 05 2016թ.